ԳԼՈՒԽ Դ.

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտ. 13-ին Հայաստանի կառավարութիւնը հրամայեց Դիլիջան—Լոռիի զօրամասի պետ Դրօին՝ մաքրել Լոռին վրացական զօրքերից: Յաջորդ օրը զօրամասը դիմեց յառաջխաղացման Վորոնցովկա—Պրիվոլնոյէ—Օփ-ըեթ—Հայրում գծով:

Գործողութեան սկսող զօրամասի մէջ մտնում էին հետևեալ միաւորները. աջ թևում՝ փոխ-գնդ. Կորոլկովը 6րդ գնդի 2րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարիւրեակ ձիաւորով և միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում՝ փոխ-գնդ. Նեստերովսկին 4րդ գնդի 2 դումարտակով, 4 գնդացիրով, 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթով: Ձախ թևում՝ գնդ. Տէր-Նիկողոսեանը 5րդ գնդի 3 դումարտակով, 12 գնդացիրով, 4րդ լեռնային մարտկոցի 3 թնդանօթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդ. Միրիմանեանը 4րդ գնդի 3 վաշտով, 4րդ գնդի ձիաւոր հետախոյզներով և 7րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթներով: Զօրամասի ուժերի համադումար թիւն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թնդանօթ, 4 հարիւրեակ ձիաւորներ: Այս համեստ ուժերով սկսւեց հայ-վրացական պատերազմը:

Պէտք է նկատել նոյնպէս, որ պարենաւորման, սարքաւորման, հագուստի ու մատակարարման տեսակէտից էլ հայկական զօրամասերը աննախանձելի վիճակ էին ներկայացնում: Օր-կուշտ, օր-սոված, ցնցոտիներ հագին, բայց, դուցէ, հէնց այդ պատճառով, յաղթելու վճռականութեամբ լի՝ հայ զինուորը կռւի դաշտ նետւեց արտակարգ աշխոյժով:

Առաջին օրն իսկ, գնդ. Տէր-Նիկողոսեանի զօրամասը, գիշերային խիզախ գրոհով, գրաւեց Վորոնցովկան ու Պրիվոլնոյէն: Գերի առնւեցին 5 վրացի սպաներ, 45 զինուոր, 3 լեռնային թնդանօթ, 1 մաքսիմի գնդացիր, առատ փամփուշտ և մեծ քանակութեամբ ձիեր: Մեր կորուստներն էին՝ սպանուած տեղակալ Զարաֆեանը, վիրաւոր՝ 8 զինուոր և տեղակալ Ազատեանը, որը մինչև կռւի վերջը զօրամասից չհեռացաւ: Գնդ. Նեստերովսկու զօրամասը գրաւեց Սանահին կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու 1 շոգեշարժ և գերի առնւեցին 15 զինուորներ: Վրացիները ունեցան մեծ կորուստ: Մեր կողմից վիրաւորւեց մի զինուոր: Վրացիների 3 զրահապատ գնացքները յամառ դիմադրութիւն ցոյց տուին, բայց Հայրումի կողմից Կորոլկովի զօրամասը քանդել էր երկաթուղագիծը և կտրել նրանց նահանջի ճանապարհը: Գիշերային գրոհով, գլխապետ Թարվերդեանը 4րդ գնդի մէկ